

«եթէ որ յէպիսկոպոսաց կամ յաւագաց
կամ ի»)

4. . . (ի փոքունց) խափանել ջանա : ՅԺԸ
հայրապետացն

. . . (նզովեալ եղիցի) Յովաննէս զը. (*)

նի ուրիշ արձանագրութիւններ, թէեւ առանց թուա-
կանի. այսպէս ձախ աւանդատան վերին յարկը շինել
է Կիրակոսի որդի Դաւիթ Զուգայեցին «յիւր հալալ
արգենց (s!) շինած, յամէն տարի :ե: աւր ժամ առ-
նեն նմա ի սբ. Գրիգորին պատն անխափան» (Յաւել.
Ա. 48): Նոյն աւանդատանն արեւմտեան ճակատին է



Պատկեր 128.

Այս և 1206 թուի արձանագրութեամբ որոշուած է
և Սարգսի արձանագրութեան ժամանակը, որ երկուսի
մէջն է գրուած, հայր Համադասպը ժամանակակից
տեսանք Գրիգոր վարդապետին (Յաւել. Ա. 45):

Ժամատան շինութեան հետ են կապուած մի քա-

վարդի և իւր ամուսին Նազի արձանագրութիւնը, որ
տալիս են իրենց «հոգս ինչս ի սբ. Գրիգոր Լուսա . . (ւո-
րիչ) . . » և ստանում տարին երկու ժամ (Յաւել. Ա. 49):

Սորա տակն է հայր Պետրոսի և Տէր Բարսղի ան-
ուան յիշատակութեամբ կիսեղծ արձանագրութիւնը,
որ ծագման ժամանակով հին ենք համարում, բայց
քանդակուած այս ժամանակները (Յաւել. Ա. 49):

(*) Փակագծի մէջ առնուածները մենք ենք լրացնում: